



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

187
Հրատարակութիւն Ասոն Սարգիսեանի

ԳՐԻԳՈՐ ԲԱՆԱՍԱՆԵԱՆ



ՈՐԲԻԿՆԵՐԻ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ



Բանաստեղծութիւններ:

«Որ ունի հոգի սիրահար՝ վառեցի և վառեցէ զթալով յազգակիցսն կարօտեալս, յորբս, յաչրիս, ՚իտնանկս. որքան սիրան զրզիցէ և ձեռն կամ քսակ բաւիցէ»...

(«Որբունի» էջ 5, շ. 7. Ս. Ալիշան)

Բաթում

1904

Տպարան Ն. Պ. Գուրսկի

891.99
Դ-19

Հասցեի և Գրքարանի # Գրքարան - Սրբազան
Սրբազան և Գրքարանի ընդհանուր

№ 187

Հրատարակութիւն Լեւոն Սարիբեկեանի
Գրքարանի ընդհանուր

1908 թ.

01 JAN 2009

Սրբազան

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԵՍԱՆԵԱՆ

19 NOV 2011

ԲԻՆԿ



ՈՐԻԳՆԵՐԻ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ



Բանաստեղծութիւններ:

«Որ ունի հոգի սիրահար՝ վառեցի
և վառեցէ գթալով յազգակիցան
կարօտեալս, յորբս, յայրիս, իտնանկս..
Որքան սիրտն զրդիցէ և ձեռն
կամ քսակ բաւիցէ»...

(«Որբունի» էջ 5, Հ. Դ. Մ. Ալիշան)

Բաթում
1904

Տպարան Ն. Պ. Գուրսկի

1007
32098

MAY 10

MAY 10

Дозволено цензурою 19 іюля 1904 г. Тифлисъ.

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՈՐԲԻ ԱՐՅՈՒՆՔԸ.

Չիւն օրերով, անձրևի տակ,
Թափառում է դեռ նա լուռ,
Իբրև կեանքի մի փրլատակ,
Հաց մուրալու դռնէ դուռ...

* * *

Յուրտ է փրչում քամին դաժան
Կոռ հիւսիսից կատաղի.
Իր հայրենի երկրից բաժան,
Արաստունքով շատ աղի,
Պատառոտած ու կարկատուն
Չորերի մէջ ու բոբիկ,
Քաղցած, ծարան, անտեղ, անտուն
Թափառում է խեղճ որբիկ...

* * *

Ո՛հ, շունի մայր, որ նա սրբէր
Լացի աղբիւր աչերից,
Տժգոյն դէմքը փայլեցնէր
Հարազատի պաչերից.
Ո՛ւր և հայրը, որ պահպանէր
Անգութ սովի ճանկերից.
Թափառում է, անխ, նա անտէր,
Չունի ոչոք կարեկից:

Միշտ գիշերով յոգնած քնում
 Գետնի վրայ—անկողին.
 Իոկ ցերեկով ձեռքը մեկնում
 Ողորմութեան եկողին:
 Ո՛հ, գլխացէք, դուք, պարոններ,
 Անբաղդ որբի արցունքին.
 Մի խընայէք սէր, խընամքներ,
 Վերջ գրեցէք տանջանքին..

* * *

Ահա որբը լալահառաչ
 Փողոցներն է շափչփում.
 Յանկարծ կանգնեց մի տան առաջ,
 «Օգնութիւն» է աղերսում.
 Ուր որ չքեղ ապրում է փառք,
 Հուրջը կանգնած պահապան.
 Նժոյգներով լծած է կառք,
 Դարբասի մօտ կտուապան,
 Սո՛ւս...տան բարձր պատուհանից
 Ուրախութեան աղաղակներ
 Օգն են թնդում և սեղանից
 Զնգում գինու բաժակներ..

* * *

Մի ժամ չանցած կառքը չքեղ
 Հեռանում էր այն տանից.
 Առաջ անցաւ որբը անմեղ
 «Օգնել» խնդրեց պարոնից.
 «Հեռի, կառքի անիւի տակ

Փորձանք կը գայ քո գլխին».
 Կուսաց որբին և մի ապտակ
 Իջաւ դունատ երեսին...

* * *

Որբը քաշուեց ամօթից
 Եւ չըզիտէր անօթից
 Ուր որոնէր ապաստան.
 Եւ դեռ ապտակն մեծատան
 Քաղցի հետը միասին
 Հետք են թողել երեսին...

* * *

Կառքը Գնաց
 Լուռ փողոցում
 Որբը մնաց
 Չեւը ծոցում...

* * *

Երկինք վառեց իր կանթեղ
 Ալ բոցերով համաստեղ.
 Ախ, ի՛նչ ասէք այդ գիշեր
 Երազի մէջ կը յիշէր
 Հայրենի տուն, սար ու ձոր,
 Ուր վարզանուշ ու խնձոր
 Համբոյրներով մօր կը ծօրին
 Խաղար ժպիտ իր դէմքին..

* *

Քանի որք չէք, գլխի վերև
Կը շողշողար ոսկի արև,
Անհոգ կեանքի ճաճանչ ու լոյս,
Գարնան շնչով վառ արշալոյս .

* *

Բայց խանգարեց տխուր ժամին
Արիւնարբու, վատ թշնամին.
Այժմ ընկած փողոցները՝
Դեռ լալիս է գիշերները ..

* *

Ձիւն օրերով, անձրևի տակ,
Թափառում է դեռ նա լուռ,
Իբրև կեանքի մի փրլատակ,
Հաց մուրալու դռնէ դուռ . .

* *

Ա՛խ, մի խնդրիր, սիրունիկ որք,
Օտար մարդկանց խրնամքներ.
Նրանց քարէ սրտերը երբ
Կը գգան որբի արցունքներ.
Ե՛կ, գու խնդրիր բո աշխարհքը,
Ուր մանկութեան խանձարուր,
Խնդրիր կարօտ մօր արցունքը
Եւ կաթ՝ անուշ կերակուր . . .

* * *

Յուրտ է փչում բամին դաժան
Գոռ հիւսիսից կատաղի.
Իր հայրենի երկրից բաժան,
Արտասուներով շատ աղի,
Պատառոտած ու կարկատուն
Չորերի մէջ ու բոբիկ,
Քաղցած, ծարււ, անտեղ, անտուն
Թափառում է խեղճ որբիկ . . .

ԱՆՁՆՈՒՐԱՅ ՈՐԲԵՐ



Գառնաշնչով, ո՛վ գիժ բամի,
Խաղաղ կեանքի դու թշնամի,
Ի՞նչ ես փչում, ի՞նչ ես դռում
Այն ամենի, մութ անտառում,
Ուր որք տղան ճամբից ընկած,
Ցրտից դող-դող և կուշ եկած
Ման է գալիս իր քոյրիկին
Ծառերի մօտ, ձիւնի տակին:
Մի ժամ առաջ սիրողաբար
Ջրոյց տալով քոյր և եղբայր
Անցնում էին այն անտառից,
Բայց դու՛ր քամի, ճանապարհից

Մոլորեցրիւր այն խեղճերին,
Յուրա փըչելով երեսներին.
Չիւնով աչեր կուրացրիւր
Եւ իրարից բաժանեցիր:
Ո՛հ, չը թողիւր, որ աներկիւղ
Որբիկները հասնէին գիւղ,
Ուր մուրալով կտոր հացին՝
Վախճան տային տանջող քաղցին:
Քանի ծառեր չաղահարես,
Որբի սիրտը սարսափ ձգես.
Նա մոլորուած ման է գալիս,
Անտառի մէջ ձայն է տալիս,
«Ո՛ւր ես, քոյրիկ՛...» բայց չես թողում,
Վզգոցներիդ մէջնես թաղում
Եղկելի ձայն այն որբիկի.
Հազիւ միայն արձագանգի
Պատասխանն է լսում հեռու
Քարափներում այն ահարկու...

* * *

«Անգո՛ւթ քամի, բաւական է,
Այժմ որբիս ո՞վ պահպանէ,
Իմ սիրասուն քոյրը չը կայ.
Օ՛, երգվու եմ, արես վկայ,
Թէ պատահած լինի փորձանք,
Մահու կըտամ իմ ամբողջ կեանք.
Գնամ ձիւնի խորը մտնեմ,
Որտեղ լինի նրան գտնեմ»:

* * *

Հէնց պատրաստուեց նա գնալու,
Իր քոյրիկին որոնելու,
Յանկարժ կանգնեց այդ միջոցին.
Ականջ զրեց ծվլոցին
Այն թռչուի, որ տխրագին
Նուագում էր ծառի ճիւղին:
Երգն էր աղի և սրտառու,
Որբը կանգնած մի քիչ հեռու՝
Բացականչեց. «սիրո՞ւն թռչուն,
Ափսոս քո այդ ազօտ լեզուն
Չեմ հասկանում: Ի՞նչ ես երգում,
Արգէօք ուրախ լուր հաղորդում,
Թէ մի տեղում քոյրս կենդան
Սպասում է իմ գալսեան,
Թէ ձիւնի տակ—վերջին շնչում
Օգնութեան է նա ինձ կանչում.
Թէ տխուր լուր—բուք ու բորան
Արգէն հասցրին մահու բերան:
Ասա, թռչնակ, ո՞ւր է քոյրս,
Այն թանկագին ծաղկաքոյրս,
Որ սիրէինք միմեանց գթով,
Մեր մօր տուած խրատներով...
Անհո՞գ թռչուն, ազատասէր,
Ո՛չ առօրեայ շնչին հոգսեր,
Անխիղճ մարդկանց ո՛չ բռնութիւն
Քեզ չեն տանջում: Երջանկութիւն
Եւ սէր կեանքի քեզ է տուած»:

Առաւօտեան ծէզը բացուած
 Արջունում ես արշալոյսին.
 Փառաբանում ան Արարչին,
 Ար շնորհել է քեզ օդ, ամպեր,
 Ազատ երկինք, ազատ հովեր...
 Իսկ ես որբս այս տատասկոտ,
 Մին աշխարհում, հացին կրօտ,
 Տանջանքի տակ ինձ խաչելով՝
 Քաշ եմ գալիս հառաչելով:
 Օ՛, մոլորում աս անտառում,
 Այս մթութեան տարտարոսում
 Ամեն տերև խշխշալիս
 Ես դողում եմ, սիրտս լալիս...»

* *

Գիշերն հասաւ, մութը տիրեց.
 Այն թռչունը հանդարտ լուեց.
 Արթնանալով խաւարի մէջ
 Բարձր ժայռի գլխին բուէճ
 Չարագուշակ ընէ է կանչում.
 Ծեր անտառը ողջ շառաչում
 Ունոցներից գայլ-արջերի.
 Խշոցներն էլ տերևների
 Վայրագութիւն շուրջը փռում.
 Ո՛վ չի վախիլ այն խաւարում.
 Որբը մենակ սարսափում էր,
 Մթութեան մէջ խարխափում էր.
 Որոնելով իր քոյրիկին՝
 Չայն է տալիս կողկողազին.

«Ո՛ւր ես, քոյրիկ, արի, դուրս եկ.
 Ա՛խ, երանի լինի ցերեկ՝
 Նորից տեսնեմ իմ քոյրիկին,
 Մատաղ գնամ նրա կեանքին»:

* *

Անձ ուժգին քամու վզոց
 Հետն է բերում ինչ որ տնքոց
 Խոր անդունդից, ուր ժայռերը
 Գծնատեսիլ գազաթները
 Վեր են ուղղել ամպերի մէջ
 Ըղթաների շարքով անվերջ.
 Սասանում են ամպրոպային
 Ճայթիւններով, դժոխային
 Որպէս խաւար՝ եռում սաստիկ
 Սառնամանիք և փոթորիկ,
 Ադմուկ են և գզրզում
 Զարհուրելի այն անդնդում...

* *

Մենակ որբը, անխ, ինչ անի.
 Այն ուղղութեամբ լսուող ձայնի
 Թեթև, յուշիկ նա քայլերով
 Չիւնի վրայ սայթաքելով
 Առաջ անցաւ դէպի անդունդ.
 Տեսաւ յանկարծ մի ձիւնի գունդ,
 Որի տակից լսուեց մի ձայն,
 Որբն իմացաւ քոյրիկն է այն.
 Արձանի պէս կանգնեց նա լուռ,

Յնցողութեան անցաւ սարսուռ
 Մերկ ու տկուր անդամներով.
 Խելքը կորցրած նա ձեռքերով
 Սկսեց ձիւն յետ-յետ տալով,
 Հետն էլ դառն արտասուելով
 Ո՛հ, շօշափել քրոջ մարմին.
 Սակայն ցաւեր հազար ու մին
 Նորից որբին պաշարեցին,
 Երբ նա ընկած պարանոցին՝
 «Քոյր» է կանչում, անխ, ձայն չկայ,
 Զանը կապտած ու անզգայ.
 Հագիւ վերջին լավում է շունչ,
 Փայտացել է երեսն ու դունչ:

* *

— «Ախ, Տէր Աստուած, ես ինչ անեմ,
 Ի՞նչպէ՞տ քրոջս բարձրացնեմ
 Բարդ-բարդ զիգուած ձիւնի տակից,
 Երբ ձեռքերս սառին ցրտից,
 Երբ ոյժ չըկայ իմ ձեռներում,
 Արիւն պաղ է երակներում.
 Լաւ է, շորս հանեմ ծածկեմ.
 Վրէն ընկնեմ, տաքացընեմ
 Սաղ մարմինը, ձեռը, ոտը,
 Մինչև բացուի առաւօտը,
 Արև ծագի փոթորկի դէմ,
 Գուցէ այս կերպ կեանքն ազատեմ»:

* *

Չատ խաղերով զիշերն անցաւ.
 Առաւօտը երբ լուսացաւ՝

Արեգակի ճառագայթներ
 Չողացնելով ողջ գագաթներ
 Ծառաստանի այն անտառի
 Եւ խոռոչներ անդունդների,
 Թերշարժ արին պառկածներին.
 Քոյրը գարթնեց և աչքերին
 Չէր հաւատում, որ եղբայրն իր
 Այնպէս ամուր և սիրալիր
 Իրեն ամբողջ գիրկն էր առել,
 Բայց այնպէս էր ցրտից սառել,
 Որ նա ինչքան աշխատում էր
 Եւ ձեռքերով տրորում էր՝
 Իր եղբայրը գարթնի քնից,
 Բայց նա արդէն սառնութիւնից
 Յուրտ զիշերին դողողացել
 Եւ յաւիտեան շունչը փչել,
 Որովհետեւ իր հագի շոր
 Ծածկել քրոջ, ինքը տկուր,
 Վերից ձիւնն էր մաղել, թակել,
 Մինչ ոսկրներ քամին ծակել.
 Իսկ քոյրիկը եղբօր տակին
 Տաքացել էր և նա կրկին
 Կենդանացած՝ շատ հեկհեկաց.
 — «Առաւօտ է, եղբայր, վեր կաց—
 Քանի պայծառ տաք է օրը,
 Լսիր թշուառ քո քուորը,
 Չուտ այստեղից մենք հեռանանք,
 Հաց մուրալու զիւրը գնանք.
 Քանի քնես դու երազում,

Ես սոված եմ՝ հաց եմ ուզում
 Եւ մեռնում եմ ուշազնաց.
 Ո՛ւր մեզ ձգեց անդունդը ցած
 Այն գիժ քամին երէկ գիշեր,
 Ում մտքիցը իսկի կանցնէր,
 Թէ անտառում մոլորուելով
 Քամու ձեռքից և ման գալով
 Կըզաս այստեղ ինձ կըզտնես,
 Տաքացնելու վրէս կըրնկնես»...

* *

Նա մօտեցաւ քնած եղբօր,
 Ողբաց անվերջ արտասուաթոր.
 Տեսաւ նրան մեռած ցրտից.
 Զատ «անխ» քաշեց խորը սրտից:
 — Իմ անձնուրաց, խելօք եղբայր,
 Ինձ կեանք տուիր, ինքզ մեռար.
 Ազատելու համար քուոր՝
 Զխնայեցիր վերջին քո շոր,
 Որ հագիցդ դու հանեցիր,
 Տաքացնելու ինձ ծածկեցիր.
 Անձնանուէր ես էլ նման՝
 Մէկ տեղ իջնենք մէկ գերեզման...
 Թո՛ղ գիժ քամին որքան ուզի
 Այս անդնդում ուժգին փչի...
 Մենք կըքնենք անժամանակ
 Ցաւից հեռու, սառն հողի տակ...

* *

Լացեց սրտից մեղամաղձոտ
 Եւ նա ընկաւ գիակի մօտ
 Անշնչացած — այն անդնդում,
 Ուր գիժ քամին էր զղրղում...

* *

Քանի այսպէս խուլ անդունդներ
 Զաղախել են գառն արցունքներ
 Խեղճ որբերի անկարեկից,
 Որ մեռնում են բազլի ճանկից...

ՈՐԲԸ ԻՐ ՄՕՐ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԱՌԱՋ



Ա՛ր հրմայիչ այն առաւօտ,
 Երբ դու նըստած օրըանիս մօտ՝
 Ասում էիր անուշ «նանիկ»
 Զգացմունքով վառ, երջանիկ:
 Ինչպէս ծաղիկ մի սիրաբոյր՝
 Գրկում էիր, տալիս համբոյր.
 Լցնում սիրտս իմ մանկական
 Միրոյ աղբիւր անմահական:
 Օրորոցից կապում նարօտ
 Ազօթքներով սրտի կարօտ
 Եւ «գիր» կպցնում իմ շորերից՝
 Ազատ լինեմ «չար աչքերից»...
 Քանի քանի պաս ու ծոմով,

Մատաղներով, խունկ ու մոմով,
 ծնրադրած լի հաւատով,
 Արտասուքով և պաղատով
 Խնդրու էիր իմ մուրազին՝
 Ուխտ գնալով այս այն խաչին,
 Որ անվնաս ես մեծանամ,
 Ապագայում լաւ մարդ դառնամ...

* *

Մի փոքր ճիշ արդէն բաւ էր,
 Կամ մի տեղըս եթէ ցաւէր,
 Իսկոյն հրեշտակ մի պահապան:
 Ճար կանէիր- դեղ ու դարման:
 Եւ սնարիս մօտ հըսկելով
 Չէիր թողնում քրչոցներով
 Չուրջս մի ճանճ հանէ ծպտուն,
 Որ խանգարէ իմ անուշ քուն...

* *

Ինչպէս գարնան կոկոն - վարդը
 Բացուած էի, ինչ էր դարդը,
 Ի՞նչ էր տանջանք - չըգիտէի,
 Թոթովախօս մանուկ էի,
 Իրրե անհոգ մի թիթեռնիկ,
 Հեռո՞ւ ինձնից գոռ փոթորիկ,
 Ազատ հոգսից ու տանջանքից,
 Հողիս հրճուում անմեղ կեանքից...
 Ի՞նչպէս էիր սիրով նայում,
 Գիրկդ առած ինձ փայփայում.

Թէ՛ժ կրակից, խեղդող ջրից
 Քանի՛ փրկել փորձանքներից...
 Հէնց սկսայ ոտքի կանգնել,
 «Մայրիկ» բառը արտասունել,
 Տէր ես կարծել քեզ աշխարհի
 Անհուն ծովում հըրճուանքների...

* *

Այսպէս հազար նեղութիւնով,
 Կեանքդ մաշած դառնութիւնով
 Լոյս ես բերել որդուդ ծնունդ,
 Ջամբել կաթը՝ տալով սնունդ:
 Եւ դու քանի՛ անքուն գիշեր
 Պաշպշելով իմ վառ թշեր
 Երգ ես ասել ու «ջանիկներ».
 Թեքեր փռած շրթեշտակներ
 Մանկական պարզ ժըպիտներով
 Թերթեռնքիս քուն բերելով
 Գալիս էին տեղըս ննջած.
 Մանիշակներ սիրուն փնջած
 Ածում գողըս և ինձ թովում,
 Ինչպէս զեփիւռ գարնան հովում.
 Եւ երկնային մեղեդիներ,
 Անմեղութեան զպարումներ
 Վառում սիրտլս և երագում
 Նրանց ժպտի հետ զրուցում:

* *

Երկնից օրհնած դու հրեշտակ կին,
 Կեանք ես գտնել քո գաւակին.

Քանի դառը մրուր, բաժակ
 Քամել ես դու մինչև յատակ.
 Քանի լուիկ արցունք ու վիշտ
 Թափել ես դու տանջանքում միշտ,
 Մինչև հասցրել ինձ հասակին.
 Լաց ես եղել իմ արցունքին.
 Երբ տխրել եմ—դու տխրել ես,
 Երբ ծիծաղել—ծիծաղել ես,
 Երբ նեղացել—տուել ես ծիծ,
 Սովրեցրել ես սիրել անբիծ
 Եւ ճանաչել չարն ու բարին,
 Ծունկ աղօթել անմահ Տէրին:
 Հողիս պահած սրտիդ խորը՝
 «Չու ու ցաւից» իմ մատները
 Տաքացրել ես քո ձեռքերում,
 Եւ մարմինը՝ քո ծնկներում:
 Աչքս բացած քեզ եմ տեսել,
 Եւ օրօրոց և խաղալիկ.
 Ո՛ւր է այժմ վայելք ու սէր
 Քո խընամոզ մայրական գիրկ...
 * * *

Աւանդ, թուան այդ օրերը,
 Ինչպէս երազ մի վաղանցուկ.
 Էլ չեմ տեսնիլ այն վառ սէրը,
 Սէր պահպանող՝ կեանքիս նեցուկ...
 Ա՛յնպէս թովիչ ո՛չ լուսնի շող,
 Ա՛յնպէս մաքուր ոչ կաթիլ—ցող.
 Ա՛յնպէս տաք տաք ոչ ամրան շոք,
 Աստղ ու արև — նման ոչ ոք...
 12

Սէր եմ ասում սէր մայրական,
 Այն զգացմանց նուիրական՝
 Միաւորող յօդակապով,
 Մի անմոռաց յիշատակով:
 Ա՛խ, այդ սէրն եմ ուզում, մայր իմ,
 Ի՞նչու հետզ տարար շիրիմ
 Ու թողիք ինձ որբ ու մենակ
 Ուրիշների դրոններին փակ...
 * * *

Քո մահից յետ սրտիս խորեր
 Սև վշտերի փոթորիկներ
 Խորտակեցին իմ սէր, իմ ուխտ,
 Տարան հեռու տեղեր պանդուխտ...
 Աստանդական երկրում օտար,
 Ո՞վ կըլինէր ինձ հոգատար,
 Ո՞վ կըյիշէր մէջ աղօթքին,
 Ո՞վ կըսեղմէր ինձ իր կրծքին.
 Հողը օտար, ջուրը օտար,
 Խորթդեմ նրանց—ո՞վ մտիկ տար...
 Ստուերի պէս
 Չըջում եմ ես...
 85022

Օտար մարդկանց վայ նամուսին...
 Դուռն է փակվում իմ երեսին.
 Ոյժից ընկած իմ խեղճ ձեռներ
 Բաղխել փորձում բազդի դռներ,
 Բայց կատակներ վայրենի, բիրտ
 Ասեղի պէս ցցվում են սիրտ.
 Ես կորցնում եմ զգայնութիւն,
 Ողբում մարդկանց ունայնութիւն

Եւ ողբալով յուսահատ, լուռ՝
Վերջը գալիս դամբանիդ դուռ...

* * *

Այժմ նայիր, մայրիկ անգին,
Թափառական որդուդ դէմքին.
Ի՞նչ է դառել — նիհարացած,
Ինչպէս աշնան տերեւ դեղնած:
Սիրտը ս՛կ է. վշտից աւանդ,
Ինքը քաղցած, օրը խաւանդ,
Կեանքը կռիւ՝ տանջանքի բո՛ւ,
Աչքը լծացո՛տ՝ արցունքի ծո՛ւ,
Չայնը նուան՝ կտրած ծպտուն.
Թափառում է անտէր, անտուն.
Իբրև բաղդի մի «հացկատակ»
Կուշ է գալիս մի պատի տակ...
Չունի հագին ոչ մի հագուստ,
Կերու խումից գուրկ է ապրուստ.
Չըկսոյ մայրը գորովալից՝
Պատսպարէ սովի ճանկից...
Գողգոթալով ձեռք կարկառում,
Ազիտորմ սիրտ պատառում.
Միայն որբիս հեծկտանքը
Քամին լսում արձագանքը...

Այո՛, մայրը մէկն է լինում.
Նա էլ պառկած գերեզմանում.
Ա՛խ, ո՞ւր գտնեմ առաջին սէր,
Օ՛, մի տանջէք վիշտ ու հոգսեր...

* * *

Չմեռն անցաւ, եկաւ զարուն,
Ծիծառն ուրախ գտաւ իր բուն.
Միայն դու ես, որ չես զարթնում,
Թշուառ անդուդ գիրկդ առնում...

* * *

Ծաղիկ կեանքի ժամանակներ,
Գուք մանկական յիշատակներ,
Ինչո՞ւ անցաք անուրջներով,
Անդառնալի թըռիչքներով.
Ա՛խ, ես ի՞նչպէս կուզեմ նորից
Հանդէս բերէք վառ անցեալից
Նոյն պատկերներ պայծառ, գողտրիկ,
Խանդակորով սէրս, մայրիկ...

* * *

Քեզ է հանչում, մայր կաթողին,
Պանդուխտ երկրից եկած որդին,
Բաց քո գիրկը նուիրական,
Տուր անուշ քուն հանգստութեան.
Ինձ չեն ժպտում օտար աստղեր,
Օտար երկինք, օտար ծովեր...
Հայրենիքի լաւ է փուշը,
Քան օտարի մեղր ու նուշը.

* * *

Ամեն գիշեր և առաւօտ
Գալով յուզուած, սիրոյդ կարօտ,

Դերեզմանը համբուրում եմ,
 Այս խօսքերով արտասովում եմ.
 «Ուր հրմայիչ այն առաւօտ,
 Երբ դու նըստած օրրանիս մօտ՝
 Ասում էիր անուշ «նանիկ»
 Զգացմունքով վառ, երջանիկ»...

ՀԱՅ ԵՆ ՈՒԶՈՒՄ ԵՒ ԼԱԼԻՍ ԵՆ ՈՐԲԻԿՆԵՐ

Յուրտ է դուրսը կէս գիշերին,
 Յուրտ է անկեանք ու սաստիկ.
 Ձիւն է իջել ողջ լեռներին,
 Արունչում է փոթորիկ...
 Անն անցաւ կէս գիշերն էլ,
 Հանդաւ կրակն օջաղի.
 Քուն են մտել խեղճ դրշերն էլ.
 Միայն քամին կատաղի
 Աղաղակով շառաչում է
 Եւ ձիւնի հաստ տարափներ
 Դէպի ձորեր շրպրտում է,
 Տարածելով սարսափներ...

*
 **

«Ախ, ինչ անեմ այս ձմեռուայ մութ գիշեր.
 Հնց են ուղսւմ և լալիս են սրբիկներ»...
 Ի՞նչ էք լալիս, իմ փոքրիկներ,

Այս ձմռան մութ գիշերին,
 Մօտեցրէք ձեր տոտիկներ
 Տարացնելու կըրակին:
 Թող կրակը օջաղի մէջ
 Վառ կայծերով ճարճատի,
 Ալ բոցերով իր ելեւջ
 Չեզ ցրտերից կազատի:
 Բոլորուցէք օջաղի շուրջ
 Կուրծքը կըծքի փոխադարձ.
 Թող ձեր մտքից, ինչպէս անուրջ,
 Անցնի տանջող սովն անգարձ...
 Ես ձեր միտքը կըփայփայեմ,
 Իմ սիրունիկ բալիկներ,
 Իմ հայրերից ինչ լսել եմ՝
 Պատմելով ձեզ առակներ:
 Դուք կըլսէք, կըմոռանաք
 Քաղցի նեղը տանջանքի,
 Քանի մէջն էլ դուք կըստանաք
 Թեթևութիւն ձեր կեանքի:
 Դէհ, գառնուկներ, ելէք շուտով
 Պառկոտեցէք, քընեցէք,
 Եղբայրական քնքոյշ սիրով
 Միմեանց ամուր գրկեցէք:
 Ո՛հ, հանգստեան անուշ բնով
 Թող փակուին ձեր աչիկներ,
 Երազի մէջ օրօրներով
 Տուէք միմեանց պաշիկներ»...

*
 **

«Ի՞նչպէս բնենք, դառն է մեր կեանք,
 Սոված, դատարկ փորերով.
 Դռներից դուռ քանի ման գանք
 Թափառական օրերով:
 Մենք քաղցած ենք, իսկ դ՞ու մայրիկ,
 Մեզ խափում ես առակով,
 Հնց ենք ուզում սրտաճմլիկ,
 Զուր ես տալիս բաժակով...
 Չէ որ ասիր, թէ մեր հէրը
 Հաց կըբերէ մեզ համար,
 Յոյսը տանջեց մեր սրտերը,

* *

Պաղեց արիւն և դամար.
 Դեռ չըբնած՝ հնց ենք ուզում,
 Մենք մեռնում ենք անօթի.
 Քունը մինչև երբ երազում
 Քաղցի վիշտը ամոքի...
 Մեր ոյժերը սպառուած են.
 Էլ չենք կարող դիմանալ.
 Մեր ջղերը շատ սառած են,
 Ս մ վ ը կուզէ բռնանալ..
 Տես մեր աչիւր մարած, հանգած,
 Յամաքել է բերնում թուր.
 Այնքան դառն լաց ենք եղած՝
 Քար է կարել արտասուր»...

* *

«Այդ ես դիտեմ, բայց ձեր հայրը
 Գնացել է առևտուր

Կըգայ փողով լի գրպանը,
 Կըբերէ տաք կերակուր:
 Անշուշտ կըգայ լուսաբացին,
 Գուցէ ճամբին մնայ նա.
 Կը գայ ու վերջ կը տայ լացին,
 Որ թափումէք անխնայ:
 Զաւակներ էք մի ծնած մօր,
 Բայց երբ ելաք իմ գրկից՝
 Դուք չըտեսաք երջանիկ օր
 Օրօրոցի հասակից:
 Երեք օր է, — ջանս դուրս գոյ—
 Որ ձեզ քաղած պահեցի.
 Քանի անգամ բիրտ, անողայ
 Մարդկանց խղճին ղիմեցի,
 Ո՛չ մի տեղից օգնութեան յոյս
 Կարեկցութեան զգացմունք.
 Ա՛խ, փրկութեան երբ արշալոյս
 Վերջ կը դնէ «սև արցունք»...

* *

Ասեց մայրը, շատ արտասուեց,
 Դուրգուրալով փոքրերին.
 Հին լաթերում քընացրեց,
 Պաչեց մէկ մէկ թշերին:
 Մի կարճ միջոց, մութ խրճիթում
 Տիրեց խորին լուութիւն,
 Փոթորկալից ձիւն էր տեղում
 Տարերքի մէջ բնութիւն:
 Քամին ուժգին սուլոցներով
 Ձիւն էր երզկից ներս թափում,

Փոքրիկները դողդողալով
Յանկարծ քնից սթափում:

* *

Մէկը ձայնեց, «ես մըսեցի,
Մի տաքացնող վերմակ տուր».
Մի ուրիշը, թէ «խեղդուեցի,
Փորըս կուզէ կերակուր»:
Անօթի եմ—գտուաց մէկնէլ,
Տուր ինձ, մայրիկ, պատան հաց.
Թէ որ մահից կուզես փրկել՝
Քանի լսես մեր սուգ, լաց».—

* *

Փոքրիկները միաբերան
Պահանջ արին թշուառ մօր.
Նա չը գիտէր տալ պատասխան,
Մնացել էր սըզաւոր:
— «Դեռ քընեցէք, թող երազը
Լինի միակ սփոփանք.
Թէ կը սիրէք ձեր մուրազը
Մի շարշարէք ձեր մօր կեանք:
Եռաւօտը լուսաբացին
Կը գայ ձեր հէր սլաշարով.
Նա վերջ կը տայ դառն լացին,
Դուք կը լինէք ապահով...»

* *

— Մուտ ես խարում, վաղուց մեր հէր
Փորձանքի մէջ մեռել է.

Այս աշխարհում անտուն, անտէր,
Մեզ կոյր բազդին մատնել է.
Այժմ ձգած սովի ճանկին
Գերեզման ես մեզ փորում.
Վայ մեր օրին, վայ մեր կեանքին,
Տուն ես արել կոտորում...»

* *

Մայրը լացեց սրտի խորքից,
Աչքը ձգեց երկնքին.
«Ո՛վ տէր—Աստուած, դու վերեկից
Մի քար ձգիր իմ գլխին.
Ա՛խ ո՛ւր գընամ այս ձմեռուայ մութ գիշեր
Հայց են ուզում և լալիս են որբիկներ...»

* *

Եւ նա վառեց թէժ կրակը,
Դուրսը գնաց շտապով.
Եկաւ պղինձը կռեատակը
Փեշը լցրած քարերով,
Որբիկներից ծածուկ լցրեց
Պինդ քարերով այն պղինձ,
Կասկարանքի վրայ դրեց *)
— «Չուտով, մայրիկ, հաց տուր ինձ»,
— Ի՛նձ էլ, ի՛նձ էլ» — ամեն կողմից
Բըղաւեցին փոքրիկներ
Կուզեն խրել միտնդամից
Պղնձի մէջ գլխիկներ...»

*) Երկաթից շինած, որի վրայ դնում են
պղինձը բան երացնելու համար:

— Սպասեցէք, լուսաբացին
Մինչև կ'եփուին հացերը,
Վերջ կը դնուի կոծ ու լացին,
Կը կշտացնէք փոքերդ...

*
* *

Բայց փոքրիկներ վրայ թռան
Այն պղնձին տնհամբեր,
Խուփը վերցրին և ինչ տեսան՝
Եւ են գալիս շոր քարեր:
Մայրը մնաց կարկամած,
Ինչպէս ծաղիկ թառամտծ.
Չեռքը երկինք տարածեց,
Դարձեալ տխուր մտածեց.

«Ա՛խ ո՛ւր գընամ այս ձմեռուայ մութ գիշեր,
Հաց են ուզում և լալիս են որբիկներ»...



Ո Ր Բ Ի Հ Ա Ռ Ա Չ Ա Ն Բ Ը

Չին է գայիս, ձին երկնքից,
Քամին գոռում ու լալիս.
Դժբաղդ որբի հառաչանքից
Արցունք խլում, շող տալիս...

*
* *

«Դուռը կտրեց դաժան ձմեռ...
Բորիկ ոտով և կիսամեռ.

Ինչպէս տանից դուրս գամ ցրտին,
Մահ է բերում սառած սրտին:
Չուրջը ձին է և գերեզման
Քամին ունում գայլի նման.
Սպիտակած գիւղ ու աւան՝
Ողջ ծածկել է ձինսի սաւան...
Մի՛ լար, մայրիկ, քիչ համբերի.
Քամին լուի, ձին դադարի.
Կ'երթամ մարդկանց պաղատելու
Եւ քեզ քաղցից ազատելու»:

*
* *

— «Ի՛նչ ցուրտ, ի՛նչ բան քաղցած փոքրին,
Դու մի նայիլ ձմրան օրին.
Դնան շուտով տոպրակն ուսանց,
Չարժիր գուժը տնխնդճ մարդկանց.
Չարժիր քարէ սրտերն օտար,
Պատմելով քո մօր ջրրտտար
Դրութիւնը, թէ նա պառկած
Պատառ հացին ձեռք կտրկառած,
Օգնու թիւն է ձեզնից խնդրում
Հալածական այս բիրտ երկրում,
Աստուած սիրէք դուք խղճացէք,
Դժբաղդ մօրս դուք փրկեցէք...
Ի՛նչ է պակաս ձմրան օրին
Ուրախ կեանքի ունևորին
Տաք վառարան և ամեն ինչ
Միայն որբն է՝ չունի ոչինչ:
Ամեն թռչուն ունի իր բուն.
Ամեն մի մարդ ապրելու տուն,

Միայն որքն է՝ երկնքի տակ
 Թափառական ու խայտառակ...
 Անբաղդ որբի օրին նալլաթ.
 Պատառ ոտուն մի գծում լաթ, —
 Ահա այդ է շոր մեր հողին
 Յուրաք հանեց մեր խիղճ հողին...
 Տես, ինչպէս է քամին փչում
 Ո՛հ թոյնալի սառնութիւն
 Որբի համար և շառաչում,
 Բերում կեանքի գառնութիւն:
 Ա՛խ, մինչև երբ լուռ, մերկանգամ
 Մենք կոնկրետնք ցրտի ճանկից.
 Արաստուքով քոնի անգամ
 Բողոք յայտնենք մեր վիճակից:
 Գնա՛, մուրա՛, հողույս հատար,
 Թափառելով դոններից դուռ.
 Գուցէ մէկը հացի կտոր
 Գնէ՛ ձեռքիդ՝ խղճալով լուռ...
 Գուցէ երկինք մեզ խնայէ,
 Հաշտ և ուրախ աչքով նայէ.
 Աստուած որբին չի մոռանայ.
 Նա կ'ուղարկի և մանանայ
 Մի վհատուիք, սիրուն որդի,
 Գնա՛, բաղխիր դուռը բաղդի.
 Մինչև գալդ ես սովի դէմ
 Վերջին ուժով կրմաքառ եմ»...

*
* *

Լացեց որբը և շատ լացեց.
 Աղ—արցունքով աչքը թացեց.

«Ա՛խ ուր երթամ, Տէր իմ Աստուած,
 Որբին արդեօք ինչ ես տուած.
 Ա՛յն, որ սև ու ճակատագիր
 Ինձ հալածէ երկրէ երկիր.
 Ա՛յն շարութեան դրժնդակ լուծ.
 Ալեկոծէ ուղեղ ու ծուծ.
 Ա՛յն, սը սիրտս միշտ յուսահատ
 Ողբայ ինչպէս շոր անապատ.
 Տանջանքի ես ինձ ենթարկում
 Կեանքի անյոյս փոթորիկում...
 Թէ սգալու անօգնական
 Թշուառութիւն իմ որբական
 Թէ բնութեան խորթ եմ գաւակ.
 Ծաղրի լինեմ եւ նոհատակ...
 2է, Տէր Աստուած, մի գուռ բացիր,
 Մեզք է մայրս, որ վախճանի.
 Օ՛, պատրաստ եմ զժոխք գցիր,
 Միայն մայրս դու պահպանի»:

*
* *

— «Թէպէտ մեր կեանք շատ ձախորդ է,
 Բայց նեղութիւն կրժնի յոյս
 Թուղպ օրերին կըյաջորդէ
 Եւ կըծագէ ջինջ արշալոյս...
 Գնա՛, մուրա՛ հարուստներից
 Գէթ մի լումայ— հացի գին,
 Փրկիր մահու սև ճանկերից
 Մօրըդ կեանքը կաթողին»...

*
* *

— «Ես պատրաստ եմ մօրըս համար
 Կեանքըս մատնել տանջանքի,
 Բայց տես ձմեռ դաժտն ու շար
 Զղթաներում կապանքի
 Բնութիւնն է կաշկանդել
 Թշուառների տուն քանդել...
 Մարգիկ կարծես, փախած ցրտին,
 Քուն են մտել երազում,
 Էլ տաք արիւն երակներին
 Մեզ օգնելու չէ վազում:
 Ի՞նչ փոյթ, մեռնենք քաղցից հիմայ
 Զեն տալ երբէք մեզի լուսայ.
 Այժմ մտած խոր տները՝
 Կրտաքացնեն մարմինները,
 Նըստած մօտը վառարանի,
 Կամ ո՞վ գիտէ, շուրջ ռեզանի
 Ճաշեր կուտեն խորտիկներով,
 Թուղթ կը խաղան խօսք ու վէճով...
 Մեզ համար ի՞նչ կըմտածեն.
 Իրենց վրայ խորհուրդ կածեն,
 Ամեն մէկի լոկ իր «եսն» է.
 Լոկ անձնական կաշուի հոգսն է
 Արդեօք կանցնի նրանց մտքից,
 Թէ որբերըս սով—տանջանքից
 Կ'երագենք լոկ այն փշրանքին,
 Որ կըձգեն շան աղտքին 1)
 Բայց ես գիտեմ գանձերի մէջ
 Հարուստ բաղդի գաւակներ

1) Առաջին

Ծիծաղում են ուրախ անվերջ
 Պարպում կենաց բաժակներ...
 Ի՞նչ դարդ... կեանքից միշտ լիացած,
 Գոհարներով շրջապատուած,
 Փարթամ սարքած խնջոյքներում
 Փառք ու բարիք են վայելում.
 Ուրախութեան արդեօք ժամին,
 Երգ ու գինու ազդման տակ
 Լուսամուտից նայիլ կամին
 Այն փողոցի փըլատակ,
 Ուր մի անկիւն որբը քաշուած,
 Յնցոտի մէջ, ցաւից մաշուած,
 Յրտի միջին դողդողալիս,
 Իր սև բաղդը անիծելիս,
 Մըմնջում է աչքը տնկած
 Այն խնջոյքին, պարերին.
 «Եզք սիրով դուք ողորմած
 Խեղճ ու աղքատ անճարին»:
 Ի՞նչ եմ ասում... Գիշեր ամեն
 Պայծառ, սիրուն երազական.
 Լացից հեռու ցլանում են
 Աշխարհներում մուրազական,
 Ամբարները լցուած ցորնով ..
 Ի՞նչ կըխորհն դուան մօտով
 Որբը կանցնէ մերկ, գլխաբաց
 Ազերսելով «փշուր մը խաց»...

* *

Ասաց որբը մըղկատալով
 Հագիւ ցրտից դողդողալով

ելաւ փողոց. բայց չըզիտէր
 Մօր փրկանքը սրտեղ գտնէք:
 Տեսաւ փռուած հսկայական
 Գեղեցկաչէն մի շինութիւն,
 Ուր տիրում էր արքայական
 Կեանքի վայել մեծ ճոխութիւն:
 Վարդոյններ արբեշումից,
 Կախած ամեն լուսամուտից,
 Սանդուղքները մարմարաչէն...
 Ահա երկու մանկան թչէն
 Բռնած մայրը, պատշգամբում,
 Խաղալիքով նրանց խարում:

* * *

«Երանի ձեզ, ո՞վ մանուկներ,
 Որ չէք տեսել փոթորիկներ,
 Որ չըզիտէք թշուառութիւն,
 Չերն է կեանքի ուրախութիւն:
 Արցունքի տեղ-վարդ չըթունքին՝
 Խաղում ժպիտ մանկական.
 Չոր գետնի տեղ-խաս անկողին,
 Ունիք պահող-տիրական»...
 Եւ մօտեցաւ որբը լալով.
 «Ո՞վ, մանուկներ ու տիկին.
 Ո՞հ, օգնեցէք կարեկցելով
 Վշտից տանջուած որբիկին:
 Մի մայր ունիմ տանը հիւանդ
 Բան չէ կերել քանի օր.
 Դող է ընկել ջանը քարքանդ
 Սովի ճանկից ահաւոր...»

Հացին կարօտ նա տանջվում է
 Գլուխը դրած շոր բարձին.
 Աչքը ճամփին սպասում է
 Բոպէներով իմ դարձին...
 Ա՛խ, մի թողէք, որ նա մեռնի
 Անյոյս, քաղցած ու ծարաւ.
 Սուրբ բերանով անշափ կօրհնի,
 Ով որ նրան հոց տարաւ»...

* * *

Մանուկները մօրը թողին,
 ձվճվալով մտան տուն.
 Նորից եկան ու ձգուեցին
 Փողոց մի շոր փաթաթուն:
 Որբը վերցրեց ուրախացած,
 Դուչեց. «ահա լուսմաներ».
 Բայց շորի ծայր մի քիչ բացած՝
 Ժանդ երկաթի կտորներ...
 Ո՛հ, դա ծաղը էր դէպի որբը.
 Սիրտը անշափ վիրաւորուած,
 նա նըզովեց այդ արարքը
 Եւ գլխակոր, յուսահատուած
 Տան միւս դռնով մտաւ բաղը,
 Ուր ձմրան թոյլ արեղակը
 Վերջալուսով այնտեղ շողեր
 Խտխտացնում ձիւնի ցոյգեր.
 Որբը կանգնեց մէջ տեղ բազի.
 Յանկարծ գինու գանգ բաժակի
 Սոյն հոյակապ հանդէպ տանից,
 Հանդիսական ճոխ սեղանից

Հասաւ նրա ականջին.
 Բայց ինչ տեսաւ առաջին,
 Բագում գամփռ շներ երկու
 Պարկոտած են քնոտած.
 «Ի՛նչպէս չա՛ր են և աշարկո՛ւ,
 Արդեօք կըլինեն կապոտած»:

*
 * *

Խեղճ որբ... վախով սրտի խորքից
 Երգեց տխուր նուագներից.
 Եւ մարմննով նա դողդողում
 Երգը խեղտվում և դողանջում
 Անապատի ինչպէս ձայն,
 Որ չըգիտես ուր է այն...
 Այն ինչ վէրե քէֆի ձայներ,
 Օգ դղրդոյ գիլ ուռուաներ՝,
 Չէին թողնում այն թշուառի
 Լսուէր ձայնը նուագների:
 Զրնգզրնգացնում բաժակները
 Կատարները տաքացած
 Ըքեզ բաղդի ընտրիալները,
 Ո՛հ, չիմացան բաղում, ցած
 Ողորմելի վիզը ճկած,
 Թշուառ որբը ինչ էր երգում
 Եւ այն ցրտին ձեռքը մեկնած
 Սրտածմրիկ ինչ էր խնդրում.
 Եւ չիմացան թէ այն շներ
 Բարձրացնելով գոռ հաջիւններ
 Վրայ թռան որբի վրայ
 Պատառելու անխնայ.

Սակայն որբը, ա՛հը սրտին,
 Մէջքը կռթնեց դիմաց պատին.
 Ճիշ արձակեց օդնութեան,
 Չեղաւ ոչ մի պատասխան:
 Նա սկսեց փայտի ծայրով
 Ըրների դէմ պաշտպանելով
 Կռուել մինչև մօտ դարբասի,
 Ուր փողոցից նա կը սպասի
 Օգնող ձեռքի անցորդներից.
 Հէնց դուրս եկաւ դռան շէմքից՝
 Այն շան մէկը ոտից խածեց
 Եւ բռնելով շատ քաշքշեց:
 Կատաղութեամբ միւսն էլ հասաւ,
 Ըորից բռնեց, իր բան տեսաւ.
 Ինչպէս մի գոհ, լացով անվերջ,
 Որբը մնաց շների մէջ:

*
 * *

Մի կերպ իրեն ձգեց փողոց
 Սրտի խորքից հանեց հագոց.
 Ըորը պատռած և ոտքից
 Արիւն վազում այն վէրքից...
 Նա կաղէկաղ, ոտքով ետքոտ,
 Գնաց լալով հացթուխի մօտ.
 «Խնդրեմ կապես Աստծոյ սիրուն
 Ետքոտ ոտքիս հոսող արիւն»...
 — «Գնա՛, կորի՛ր, դէ՛ անպիտան,
 Քանի տանես մարդու գահ լան.
 Ի՛նչ ես չըջում տները
 Որ քեզ կծեն շները»:

— «Հնց եմ ուզում, մի մայր ունեմ
 Տառապում է դեռ սովի դէմ
 Թէ չըհասցնեմ հացի պատառ՝
 Կըփշանայ կեանքը իսպառ»...
 Բայց փոխանակ այն հացթուխը
 Կարեկցելու, հանեց մուխը
 Քիթի միջից, բարկանալով,
 Որբի գլխին բռունցք տալով:

* *

Որբը լռեց, այնքան կայաւ,
 Այն հացթուխը հէնց հեռացաւ,
 Մի հաց վերցրեց զաղտագողի.
 Բայց հացթուխը ինչ կըթողի.
 Եկաւ, տեսաւ մի հաց պակաս.
 «Ինչո՞ւ համար այստեղ դու կաս
 Որ չը գիտես ո՞վ գողացաւ».
 Աշակերտին նա բարկացաւ.
 Հը, ինչ եղաւ այն որբ տղան,
 Ման էր գալիս թափառական.
 Նա է վերցրել հացը անշուշտ,
 Քաղցած փորին տեղ կըտայ կուշտ»:

* *

Ատեց, թուաւ գայրացած
 Փողոցն ու մէկ դէպի ցած.
 Տեսաւ, որբը կաղէկաղ
 Կռնապատիկ հացը սաղ:
 Հասնելուն պէս ապտակեց,
 Հացը խլեց շալակեց

Տարաւ դէպի դատարան.
 «Հացս գողցաւ այս տղան»,
 Այն հացթուխը գանգատուեց,
 Որբը այստեղ նախատուեց.
 — «Ինչո՞ւ, պարոն դատաւոր.
 Ես կըլինեմ մեղաւոր»:
 — «Որովհետեւ սուրբ օրէնքով,
 Արդարութեան իրաւունքով
 Արժանի է զողը պատժի.
 Մի կտոր հնց, գողանալն արժի՞»...
 — «Գողութիւնը ինձ համար չէ,
 Թիչ վատ է և արդար չէ,
 Բայց ինչ արած, մայրս պառկած,
 Քաղցածութեան դուռն ընկած,
 Չորս օր խաշուած՝ խնդրում է հաց.
 Մէկը դուռը թէ չանէ բաց,
 Չունչը կըտայ, էլ երթամ ո՞ւր,
 Էլ ո՞ւմ գիմեմ, ընկնեմ որ ջուր»...
 Դատաւորի խիղճը շարժուեց
 Էլ մեղաւոր չը ճանաչեց.
 Նա հացթուխին վճարեց գին,
 Հացը տուաւ խեղճ որբիկին...
 «Ի՛նչ շուտ վերցրու,
 Մօրդ հասցրու»:

Որբը եղաւ շքնհորակալ,
 Ո՛հ, սկսեց ուրախանալ
 «Աստուած կեանք տայ, ո՞վ դատաւոր,
 Մէկը գառնայ հաղարաւոր:
 Ներիր, Աստուած իմ գող-յանցանք.
 Լսիր վերջին իմ հառաչանք.

Այնքան պահիր շունչը մօրս,
 Որ տուն հասնէ մեղաւորս.
 Արդեօք դեռ նա ջերմ կաղօթի
 Որդու դարձին դեռ անօթի,
 Թէ տանջանքից ընկած դէս դէն
 Մահն է փշել շունչը արդէն»...

* * *

Տխուր մտքեր մուսյուկեցին
 Եւ քայլերը շտապեցին.
 Ո՛չ կառքերի զզրուոցը,
 Ոչ մարդկանց զոբբոցը
 Չէին ազդում նրա ուշքին,
 Հասնել կուզէր իր մօր կեանքին:
 Նա չէր զգում իր շօրս կողմում
 Ի՞նչ է լինում, ի՞նչ կատարվում:
 Գիշերն արդէն իջաւ մթին,
 Երբ նա հասաւ այն խրճիթին,
 Ուր ապրում էր այն անսահման
 Անկեղծ սէրը-հրեշտակը,
 Որի գրկում իր մանկական
 Անց է կացրել յիշատակը:
 Հասնելուն պէս դուռը զարկեց,
 «Մայրիկ՛, վերկաց,-ազադակեց.
 Բայց պատասխան չը կար ներսից
 Անհամբերող սրտի հերսից 1
 Կրկին զարկեց դուռը ուժգին.
 «Ջարթիր քնից, մայրիկ անգին,

1 ներքին գայլոյթ:

Այսօր ոչինչ ես չեմ կերել.
 Տես, քեզ համար հաց եմ բերել»...
 Գարձեալ ո՛չ ձայն ոչ մի շշուկ.
 Փոքրը երկկից նա կամացուկ
 Նայեց ներսը, ո՛հ, տեսաւ ի՞նչ,
 Մայրը քնած խոր քաղցրանենդ.
 Վերնաշորը մի կողմ ձգած,
 Չեռնեք խաշած, գետին փռուած
 Եւ քար կտրած արտասունքներ
 Ծածկել էին թերթեանքներ.
 Մահը գէճքին գրել կնիք,
 Ինչպէս ձմրան սառնամանիք.
 «Ո՛հ, մեռած է, էլ ո՛ւմ գրկին
 Սէր վայելի որբիս հոգին.
 Տա՛ր խնդրում եմ, ի՞նձ էլ, մայր իմ,
 Քո ցաւի հետ խաւար շիրիմ»...

Ուշաթափուած, հացը ծոցում,
 Ընկաւ որբը մութ փողոցում...

* * *

Ձինն է գալիս, ձինն երկնքից,
 Քամին գոռում ու լալիս.
 Գժբազդ որբի հառաչանքից
 Արցունք խլում, շաղ տալիս.....



Բովանդակութիւն

	Էջ
1 Թափառական որբի արցունքը («Գեղունի») 1	
2 Անձնուրաց որբեր («Զգացմունք») 4	
3 Որբը իր մօր գերեզմանի առաջ («Զգացմունք») 13	
4 Հաց են ուզում և լալիս են որբիկներ «Տարազ» 20	
5 Որբի հառաչանքը (նուէր Ա. Ահարոնեանցին) 29	

«Ազգային գրադարան



NL0326456

Լոյս են տեսել նոյն հեղինակի հետևեալ աշխատութիւնները

1. «Ռոստոմ և Սարման» (պօէմ) [Թիֆլիս
1896 թ. գինը 25 կ.
2. «Առիւծաձև Մհեր» (պօէմ) Մոսկուա
1899 թ. — 25 կ.
3. «Զգացմունք» (ժողովածու բանաստեղ-
ծութիւնների) Վենետիկ, 1902 թ. 40 կ.
4. «Պատիկ Մհեր» (պօէմ) 1904 թ. 25 կ.
5. «Որբիկների Արցունքները» 1904 թ. 30 կ.

Չուտով մամուլի տակ կը մտնեն

«Երկու Պահլաւան» «Սասունցի Դաւիթ» (երկու հատոր) «Ճանապարհորդական տպաւորութիւններ» «Դիմակի տակ» (խմբագիրների և քննադատների կեանքից) «Իւրից Վեսելովսկի և Սմբատ Չահազիզ» («Բանասէրից») «Ռուսահայոց նորագոյն Բանաստեղծական գէմքեր»:

Գ Ի ն ն է 30 Կ.

Դիմել բոլոր գրավաճառներին և հրատարակչին,
Батумъ Л. А. Сарибегянцъ с. д. № 272 կամ
հեղինակին Шулаверы Григорию Баласанянцу.